ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ 24-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

1993 թ. նոյեմբերի 2—3-ը ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում տեղի ունեցավ երիտասարդ գիտաշխատողների 24-րդ նստաշրջանը։ Այն նվիրված էր ինստիտուտի հիմնադրման և գիտական բազմաբեղուն գործունեության 50-ամյակին։

Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի փոխտնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Ռ. Լ. Ազիզբեկյանը։ Նա մասնավորապես նշեց, որ նման նստաշրջանները, որոնք ինստիտուտի գիտական կյանքում դարձել են բարի ավանդույթ, երիտասարդ պատմաբաններին հնարավորություն են ընձեռում ձեռք բերել գիտական աշխատանքի փորձ և հմտություն։ Միաժամանակ, նկատեց Ռ. Ազիզբեկյանը, զեկուցումները նաև հաշվետվություններ են գիտական աշխատանքների կատարման և արդյունքների մասին։

Ապա լսվեց ասպիրանտ Ս. Պ. Մուրադյանի «Կուտինայի (Քյոթուկ) Հիշատակարանի» աղբյուրագիտական բնութագրման վերաբերյալ» զեկուցումը։ Նա ընդգծեց, որ «Կուտինայի Հիշատակարանը» իր գիտական կարևորությամբ և պատմական նյութի լայն ընդգրկումով կարևոր և արժեքավոր սկզբնաղբյուր է Փոքր Ասիայի հայկական հնագույն գաղթօջախներից մեկի՝ Քյոթահիայի պատմության, նրա քաղաքական, տնտեսական և հոգևոր կյանքի մասին։ Հիշատակարանի հիմնական մասը XVIII դ. սկզբներին կազմել է Անտոն Կուտինացին (Քյոթահիացին)։ Այն ընդգրկում է 1445 թ. մինչև XVIII դ. առաջին քառորդը տեղի ունեցած քաղաքական, ռազմական ու պատմական հիմնական անցուդարձերը։ Հիշատակարանը միաժամանակ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Օսմանյան Թուրքիայի XV—XVIII դդ. պատմության վերաբերյալ։

Կրտսեր գիտաշխատող Ս. Թ. Սարգսյանի զեկուցումը նվիրված էր հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչներից մեկի՝ Արմենակ Եկարյանի կյանքին և գործունեությանը, որը, ցավոք, պատմագիտության մեջ ցայսօր ըստ արժանվույն չի գնահատվել։ Զեկուցողը հանգամանալից կանգ առավ 1890-ական թվականներին Ա. Եկարյանի ծավալած գործունեության քիչ հայտնի դրվագներին, նշելով, որ ռազմական գործչի և ղեկավարի նրա տաղանդը առավելապես դրսևորվեց 1915 թ. Վանի հերոսական ինքնապաշտպանության ժամանակ։

Կրտսեր գիտաշխատող Ա. Հ. Կարապետյանի զեկուցման թեման էր «Արմենականների մասնակցությունը 1890-ական թթ. ինքնապաշտպանական մարտերին»։ Ներկայացնելով այդ տարիներին Օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ կիրառվող բռնությունների ու կոտորածների քաղաքականությունը և համառոտակի անդրադառնալով Արևմտյան Հայաստանում տիրող ծանր կացությանը, զեկուցողը հանգեց այն եզրակացությանը, որ այդ ամենի տրամաբանական պատասխանը պետք է լիներ որոշ վայրերում հայերի ինքնապաշտպանության դիմելը։ Ընդհանուր գծերով ներկայացնելով դիմադրական մարտերին նախորդած կազմակերպչական աշխատանքները (զենքի ու զինամթերքի հայթայթում և փոխադրում), որ իրականացնում էին արմենականները, Ա. Կարապետյանը գլխավորապես կանգ առավ Վանի 1896 թ. հունիսյան ինքնապաշտպանության կարևոր իրադարձությունների վրա, ըստ արժանվույն գնահատելով և վերլուծելով արմենականների ներդրումը ժողովրդի դիմադրությունը կազմակերպելու գործում։

«Հայերը Թուրքիայի մշակութային կյանքում (XIX դարի վերջին քառորդ)» զեկուցման մեջ կրտսեր գիտաշխատող Ն. Լ. Պլուզյանը բազմաթիվ փաստերի վերլուծությամբ հիմնավորեց և ցույց տվեց հայերի մեծ ավանդը Օսմանյան Թուրքիայի տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման ընթացքում։ Զեկուցողը կոնկրետ փաստերի վկայակոչմամբ ընդգծեց արևմտահայերի անուրանալի ներդրումը կայսրության ճարտարապետության, թատերական արվեստի, գեղարվեստի, տպագրական գործի, կրթության և այլ բնագավառներում։ Այս պատմական իրողությունը, ինչպես իրավացիորեն նկատեց Ն. Պլուզյանը, կմնա անջնջելի և կապացուցի, որ թուրքերը շատ բաներում պարտական են հայերին։

Ասպիրանտ Գ. Հ. Հովհաննիսյանի զեկուցման թեման էր «Արփիար Արփիարյանի հրա-

պարակախոսությունը Կ. Պոլսի հայ պարբերականներում», խոսելով Ա. Արփիարյանի՝ 1880—1890-ական թվականների հրապարակախոսական գործունեության մասին, զեկուցողը նշեց, որ նա իր ազգային առաջադիմական գաղափարներն արծարծում էր «Մշակ», «Մասիս», «Արևելք», «Հայրենիք» պարբերականներում, քննելով հասարակական կենցաղի երևույթները, կարևորելով գիտության, կրթության և գրականության դերը ազգային առաջադիմության գործում։ Օսմանյան դաժան գրաքննության պայմաններում Ա. Արփիարյանը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի խնդիրները լուսաբանում էր պատմության և գրականության հարցերի արծարծման միջոցով։ Նրա հրապարակախոսական տաղանդն ավելի մեծ թափով դրսևորվում է «Հայրենիքի» խմբագրապետ եղած տարիներին, երբ նա օրաթերթի շուրջն է համախմբում արևմտահայ նշանավոր գրողներին և հրապարակախոսներին։

Հետաքրքիր, փաստառատ և արժեքավոր էր կրտսեր գիտաշխատող Մ. Դ. Դանիելյանի «Հայրենասերների միություն կազմակերպությունը» զեկուցումը։ Ձևավորվելով 1882 թ. Մոսկվայում ուսանող հայ երիտասարդների կողմից, կազմակերպությունը նպատակ էր հետապնդում Արևմտյան Հայաստանի ազատագրության համար միավորել հայ երիտասարդությանը։ Ինչպես իրավացիորեն հիմնավորեց Մ. Դանիելյանը, այդ կազմակերպությունը գտնվում էր հեղափոխական նարոդնիկության ուժեղ ազդեցության տակ և տիպիկ ազգային-նարոդնիկական կազմակերպություն էր։ «Հայրենասերների միությունը» գոյատևեց մինչև 1885 թ. և նկատելի հետք թողեց հայ ազգային-ազատագրական շարժման պատմության մեջ։ Զեկուցումը կազմված էր արխիվային նորահայտ վավերագրերի քննական վերլուծության և իմաստավորման վրա, որի արդյունքում նորովի էին ներկայացվում կազմակերպության գործունեության որոշ կարևոր հարցեր։

Կրտսեր գիտաշխատող Ս. Մ. Սաճակյանը հանդես եկավ «Համալսարան» գրական-գիտական պարբերականը (1899—1902 թթ.)» զեկուցմամբ։ Օրաթերթը, որը հրատարակվել է Փարիզում, մեծ դեր է խաղացել ֆրանսահայ գաղութի կյանքում, հայ երիտասարդության հայեցի կրթության և դաստիարակության գործում։ «Համալսարանի» նպատակը, ինչպես նշում էր զեկուցողը, ժողովրդի լուսավորումն էր, գիտության տարածումը և ժողովրդականացումը։ Ուստի, պատահական չէր, որ այն, չնայած իր կարճատև գոյությանը, դարձավ հայ երիտասարդության օգնականը։

Ասպիրանտ Ք. Ռ. Ավագյանի զեկուցման մեջ («Հայերի գաղթն Ամերիկա XVII դարի սկիզբ—1920 թ.») քննարկվում էին դեպի Հյուսիսային Ամերիկա հայերի արտագաղթի պատճառներն ու շարժառիթները։ Ընդամենը՝ անհամեմատ ավելի շատ արևմտահայեր էին արտագաղթում, քան արևելահայեր։ Զեկուցողի կարծիքով, այդ ամենը պայմանավորված էր սուլթանական կառավարության հայահալած քաղաքականությամբ և միսիոներների քարոզչական գործունեությամբ։ Ք. Ավագյանը անդրադարձավ նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքական ու տնտեսական կյանքում հայերի խաղացած դերին։

Արդիական էր ասպիրանտ Ա. Գ. Ղազարյանի «Հայաստանի երիտասարդությունը 1988—1992 թթ.» զեկուցումը։ Երիտասարդությունը ազգաբնակչության առավել ակտիվ մասն է, ուստի պատահական չէ, որ նա կանգնած էր ազգային զարթոնքի և ազատագրական շարժման ավանգարդում։ Արդյունքում՝ ազգային բանակի և ֆիդայիների 70 %-ը մինչև 35 տարեկաններն են։

Նշելով, որ շուկայական հարաբերությունների հաստատման պայմաններում վատացել է երիտասարդության սոցիալական վիճակը, զեկուցողը հրատապ համարեց երիտասարդների նկատմամբ պետական մոտեցումը, որը պետք է արտացոլվի երիտասարդության մասին օրենքում։ Ա. Ղազարյանը հանգեց այն եզրակացության, որ երիտասարդության դերն անվիճելի է անկախ պետության կայացման գործում, և նրա այսօրվա դրությունը կբնորոշի ազգի ապագան։

Զեկուցումների շուրջը ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակում։

Գիտական նստաշրջանի արդյունքներն ամփոփեց պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հ. Ա. Ավետիսյանը։

Ռ. Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ռ. Օ. ՍԱՀԱԿՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածուներ